ՀՈԴՎԱԾՆԵՐ՝

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ԷԴԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ

Հասարակական-տնտեսական ֆորմացիան երկու կարգի՝ բազիսային և վերնաշենքային հարաբերությունների սիստեմն է, իսկ դրանցից յուրաքանչյուրը, այսինքն՝ և՛ բազիսը, և՛ վերնաշենքը ունեն առաջադիմության իրենց սեփական, հարաբերակցորեն ինքնուրույն չափանիշը։ Ավելին. նշված երկու կարգի հարաբերությունների՝ իբրև հասարակական-տնտեսական ֆորմացիայի ենթասիստեմների ներսում էլ գործում են հատուկ չափանիշներ, որոնք բնութագրում են տվյալ ենթասիստեմի այս կամ այն տարրի առաջադիմության աստիճանը։ Եվ, ինչպես բազիսը կամ վերնաշենքը, առավել ևս նրանց որևէ առանձին տարրը չի սպառում ֆորմացիայի ողջ բովանդակությունը, ճիշտ այդպես էլ ո՛չ բազիսի, ո՛չ վերնաշենքի և ոչ էլ դրանց որևէ առանձին տարրի առաջադիմության չափանիշը չի կարող ներկայացնել ֆորմացիայի՝ որպես ամբողջական սիստեմի, առաջադիմության աստիճանն իր ողջ հարստությամբ։ Այդ հարստությունը երևան կարող է գալ միայն մի շարք տարբեր կարգի չափանիշների կոմպլեքսով։

Սա փաստ է, որն ընդունում են բոլոր հեղինակները։ Նրանց տեսակետները բաժանվում են այն ժամանակ, երբ հարց է դրվում, թե հասարակական առաջադիմության չափանիշների կոմպլեքսում ո՞րն է գլխավոր, գերորոշիչ չափանիշը։ Սկզբից ևեթ նկատենք, որ որոշ հեղինակներ մերժում են նույնիսկ այդպիսի չափանիշի մասին հարցադրումը, ուրեմն և՝ մեկ հիմնական, գլխավոր չափանիշի գոյությունը։ Այսպես, օրինակ, գտնելով, որ հասարակության առաջադիմությունը որոշվում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, կուլտուրական և բարոյա-գաղափարախոսական գործոններով, Ա. Սոբոլևը եզրակացնում է. «միայն բոլոր այս գործոնների ամբողջությունն է ցույց տալիս այս կամ այն հասարակության տեղը մարդկության պատմական առաջադիմության մեջ»[1]։ Այս տեսակետը, որը ոմանք անվանում են «պլյուրալիստական»[2], անշուշտ, պարունակում է ռացիոնալ հատիկ։ Վերջինս արտահայտվում է այն բանի ընդունման մեջ, որ հասարակության առաջադիմությունը որոշվում է նրա տարբեր կողմերի փոխազդեցությամբ, որ, իրոք, ինչպես արդեն նշվել է, հասարակության առաջադիմության աստիճանն իր ողջ հարստությամբ ներկայանում է միայն մի շարք չափանիշների

---

[1] «Какое будущее ожидает человечество», Прага, 1964, *էջ 56։*

[2] *Տե՛ս, օրինակ,* И. Я. Левяш, Содержание и критерий общественного прогресса, Саратов, 1973, *էջ 93։*

կոմպլեքսում։ Բայց կանգ առնել այստեղ, իսկ «պլյուրալիստները» հենց այդպես էլ վարվում են, նշանակում է կանգնել կես ճանապարհին, սոսկ արձանագրել հայտնի փաստը և շրջանցել բուն պրոբլեմը։ Միանգամայն տեղին են նկատում Ա. Կազակովը և Լ. Սոկոլովը, որ առաջադիմության չափանիշի ճիշտ ըմբռնումից առավել չափով հեռու են գտնվում հենց «պլյուրալիստական» կամ «բազմագործոնային» տեսակետի կողմնակիցները[3]։ Իսկապես, հասարակության առաջադիմության պրոցեսում նրա տարբեր կողմերին վերագրել հավասարարժեք ֆունկցիաներ և մերժել մեկ գլխավոր չափանիշի գոյությունը, նույնն է, թե վերակենդանացնել գործոնների իր դարն ապրած տեսությունը[4]։

Հակառակ «պլյուրալիստների» պատկերացումների, հասարակական առաջադիմության չափանիշների կոմպլեքսը ամենևին չի բացառում գլխավոր, հիմնական չափանիշի գոյությունը։ Իսկ այդ չափանիշն ընկած է հասարակական կյանքի այն կողմում, որի առաջադիմությունն է վերջին հաշվով որոշում հասարակության՝ որպես ամբողջական սիստեմի, առաջադիմությունը։

Քանի որ հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմքը նյութական կյանքի արտադրության եղանակն է, ապա այստեղ էլ պետք է փնտրել հասարակական առաջադիմության հիմնական չափանիշը*։ Սա նշանակում է, որ հասարակական առաջադիմության չափանիշի ըմբռնման հարցում մարքսիզմն սկզբունքորեն սահմանազատվում է և՛ իդեալիզմից, և՛ մետաֆիզիկական մատերիալիզմից։

Այսպիսով, երբ խոսվում է հասարակական առաջադիմության հիմնական չափանիշի մասին, ապա այն ամենից առաջ վերաբերում է հասարակության տնտեսական կյանքի առաջադիմության չափանիշին։ Եթե մի կողմ թողնենք առաջադիմության չափանիշի «պլյուրալիստական» ըմբռնումն իր փոքրաթիվ կողմնակիցներով, ապա կարելի է ասել, որ մարքսիստ փիլիսոփաների բանակում այս հարցի շուրջը տարաձայնություններ չկան։ Այնուամենայնիվ, այս շրջանակներում նույնպես առկա են տարբեր տեսակետներ։ Որոշ հեղինակներ հասարակական առաջադիմության չափանիշ են համարում արտադրողական ուժերի զարգացման տեմպերը կամ աշխատանքի արտադրողականության աճը[5]։ Մյուսները՝ միաժամանակ և՛ արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, և՛ արտադրական հարաբերությունների տիպը[6]։ Ոմանց կարծիքով էլ հասարակական առաջադիմության չափանիշն արտադրողական ուժերի զարգացման մակարդակ է[7]։ Գոյություն ունեցող տեսակետները թերևս սրանցով չեն սպառվում, սակայն տվյալ դեպքում մեր նպատակը ոչ թե դրանց բազմազանության վերհանումը կամ անընդունելիների քննադատությունն է, այլ այն տեսակետի պաշտպանումն ու դրա դեմ ուղղված առարկու-

---

3 «Коммунизм и социальный прогресс», Л., 1973, էջ 30։

4 Այդ մասին տե՛ս И. Я. Левяш, նշվ. աշխ., էջ 93, 96—97։

* Այսուհետև, «հասարակական առաջադիմության չափանիշ» արտահայտության տակ մենք կհասկանանք ֆորմացիայի առաջադիմության հիմնական չափանիշը։

5 Տե՛ս, օրինակ, А. А. Макаровский, Общественный прогресс, М., 1970.

6 Տե՛ս, օրինակ, «Марксистская и буржуазная социология сегодня», М., 1964, էջ 65—66։

7 Տե՛ս, օրինակ, М. Я. Ковальзон, Общественный прогресс («Вопросы философии», 1966, № 4, էջ 161)։

թյունների հաղթահարումը, որն ընդունում ենք։ Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք հասարակական առաջադիմության չափանիշն են համարում արտադրողական ուժերի զարդացման մակարդակը։

Արտադրողական ուժերի զարդացման մակարդակի չափանիշի դեմ սովորաբար առարկում են, գտնելով, որ «Արտադրողական ուժերի զարդացման մակարդակը մեր երկրում դեռևս չի գերազանցում ԱՄՆ-ում ձեռք բերված մակարդակին, սակայն ցանկացած բուրժուական հասարակության համեմատությամբ սովետական սոցիալիստական հասարակության ավելի առաջադիմականության մեջ կասկած չկա»[8]։

Ստացվում է այնպես, որ իբր, եթե հասարակական առաջադիմության չափանիշ համարենք արտադրողական ուժերի զարդացման մակարդակը, ապա լավագույն դեպքում պետք է ընդունենք, որ արդի կապիտալիզմը և սոցիալիզմը գտնվում են հասարակական առաջադիմության միևնույն աստիճանում։ Ուրիշ խոսքով. արտադրողական ուժերի զարդացման մակարդակի չափանիշը մերժվում է այն պատճառաբանությամբ, թե իբր դա անխուսափելի է դարձնում պատմական փաստերի հետ անհամատեղելի հետևությունները[9]։ Սա մասնագիտական գրականության մեջ հանդիպող միակ վճռական «հակափաստարկն» է նշված չափանիշի դեմ։ Բայց սա կարծեցյալ հակափաստարկ է։ Բանն այն է, որ պատմական փաստերի հետ անհամատեղելի հետևությունները բխում են ոչ թե արտադրողական ուժերի զարդացման մակարդակի չափանիշի ընդունումից, այլ, պարզապես, արտադրողական ուժերի զարգացման մակարդակի ոչ ճիշտ ըմբռնումից։ Վերջինս դրսևորվում է այն բանում, որ արտադրողական ուժերի զարդացման մակարդակը, թեկուզև լռելյայն, նույնացվում է արտադրողական ուժերի բովանդակության (արտադրության իրային և անձնական գործոններ), հատկապես արտադրության միջոցների կամ աշխատանքի գործիքների զարդացման փուլի հետ։ Դրանից հետո, իհարկե, դժվար չէ մերժել արտադրողական ուժերի զարդացման մակարդակի չափանիշը, քանի որ կոմունիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի առաջին փուլը՝ սոցիալիզմը, և կապիտալիզմն ունեն արտադրողական ուժերի միևնույն բովանդակությունը, խարսխվում են նյութատեխնիկական նույն բազիսի, աշխատանքի գործիքների զարդացման միևնույն փուլի վրա։ «Աշխատանքի գործիքների զարդացման երկրորդ պատմական աստիճանը՝ մեքենաները,— ինչպես Ս. Թովմասյանն է նշում,—հանդիսանում են երկու արմատապես հակադիր սոցիալ-տնտեսական սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի տեխնիկական հիմքը...»[10]։

Ընդ որում, կոմունիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի լինելիության շրջանում դրսևորվող այս առանձնահատկությունը, առանձնահատկություն, որը գործում է նաև կապիտալիզմի լինելիության վաղ աստիճանում, Ս. Թովմասյանը ձևակերպում է որպես, այսպես կոչված, ոչ ադեկվատության սկզբունք։ «Այս առանձնահատկությունը,— գրում է նա,— որ մեր կողմից պայմանականորեն անվանվում է նոր հասարակության զարդացման վաղ աստիճաններում արտադրության տիրապետող եղանակին նյու-

---

8 «Коммунизм и социальный прогресс», էջ 36։

9 Նույն տեղում, էջ 36։

10 С. С. Товмасян, Качественные фазы развития техники и современная научно-техническая революция, Ереван, 1970, էջ 48։

թատեխնիկական բազիսի ոչ ադեկվատության սկզբունք, իրացվում է միայն սկսած մասնավոր-սեփականատիրական վերջին սոցիալ-տնտեսական ֆորմացիայից։ ...Արտադրության տիրապետող եղանակին նյութատեխնիկական բազիսի ոչ ադեկվատության օրենքը դրսևորվում է նաև կոմունիստական սոցիալ-տնտեսական ֆորմացիայի լինելիության շրջանում»[11]։

Այսպիսով, առարկությունը, որն ուղղում են արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշի դեմ, իրականում ուղղված է արտադրողական ուժերի բովանդակության զարգացման մակարդակի (փուլի) «չափանիշի» դեմ, իսկ այս չափանիշի դեմ ամենաուժեղ և բավարար հակափաստարկը հենց ոչ ադեկվատության սկզբունքն է։

Ոչ ադեկվատության սկզբունքն ամենևին ավելորդ չի դարձնում արտադրողական ուժերի զարգացման մակարդակին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը և այս պատճառով էլ դա հակափաստարկ չէ ընդդեմ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշի։ Եթե այդ սկզբունքը տարածվում է միայն կապիտալիստական և կոմունիստական հասարակական-տնտեսական ֆորմացիաների ստորին փուլերի վրա, ապա համապատասխանության օրենքը դրսևորվում է բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում, դրանց զարգացման բոլոր փուլերում։ Այս օրենքում ամրագրվում է այն, որ հասարակական-տնտեսական ֆորմացիայի պատմական և տրամաբանական նախադրյալն արտադրողական ուժերի զարգացման մակարդակն է։ Մերժել արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշը, նշանակում է չընդունել համապատասխանության օրենքը։ Մինչդեռ, առանց համապատասխանության օրենքի հայտնադործման, որտեղ արտադրական հարաբերությունների տիպը հանգեցվում է նյութական արտադրողական ուժերի զարգացման մակարդակին, մարքսիզմը չէր կարող հասարակական-տնտեսական ֆորմացիաների հերթագայությունը դիտել որպես բնապատմական պրոցես, ուրեմն և՝ սոցիոլոգիան դնել գիտական հողի վրա։ «Միայն հասարակական հարաբերությունների հանգեցումն արտադրական հարաբերությունների և վերջիններիս հանգեցումն արտադրողական ուժերի բարձրության,— գրում է Վ. Ի. Լենինը,— ամուր հիմք տվեց հասարակական ֆորմացիաների զարգացումն իբրև բնապատմական պրոցես ներկայացնելու։ Իսկ ինքնին հասկանալի է, որ առանց այդպիսի հայացքի հասարակական գիտություն էլ չի կարող լինել»[12]։ Համապատասխանության օրենքը և ոչ ադեկվատության սկզբունքը չեն բացառում միմյանց, որովհետև ոչ ադեկվատության սկզբունքում խոսքը վերաբերում է արտադրողական ուժերի բովանդակությանը, իսկ համապատասխանության օրենքում՝ արտադրողական ուժերի՝ որպես բովանդակության և ձևի միասնությանը։

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակի ոչ ճիշտ ըմբռնումը որոշ հեղինակների թույլ չի տալիս մինչև վերջ հետևողական լինել։ «Մարքսիստական սոցիոլոգիան հաստատում է,— գրում է, օրինակ, Վ. Կապիրին,— որ գլխավոր չափանիշ է հանդիսանում արտադրողական ուժերի զարգացման մակարդակը առաջին հերթին, որն էլ թույլ է տալիս դատելու, թե

11 Նույն տեղում, էջ 92։

12 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 160։

հասարակության զարգացման ինչպիսի աստիճանի վրա է գտնվում տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան կամ, այլ բառերով ասած՝ թույլ է տալիս դատելու մի ֆորմացիայի նկատմամբ մյուսի առաջադիմականության մասին»[13]։ Թվում է, թե ամեն ինչ կարգին է։ Սակայն շուտով պարզվում է, որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշն անբավարար է և դա պետք է լրացնել արտադրական հարաբերությունների տիպի չափանիշով[14]։ Այս տեսակետն ավելի որոշակի է շարադրում Վ. Սեմյոնովը. «Բանն այն է,— գրում է նա,— որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակն իրականում հանդիսանում է հասարակական առաջադիմության գլխավոր, բայց ոչ միակ չափանիշը։ Սոցիալական առաջադիմության չափանիշը պետք է փնտրել և՛ արտադրողական ուժերի զարդացման, և՛ արտադրական հարաբերությունների բնույթի, և՛ նրանց համապատասխանության մեջ։ Անհրաժեշտ է վերցնել արտադրության եղանակն ամբողջությամբ և ոչ թե նրա մի կողմը կամայականորեն կտրել մյուսից»[15]։

Իհարկե, արտադրողական ուժերի զարգացման մակարդակը հասարակական առաջադիմության միակ չափանիշը չէ և անբավարար է, սակայն, միայն այն իմաստով, որ դա չի բնութագրում հասարակական-տնտեսական ֆորմացիայի առաջադիմականության աստիճանն իր ողջ հարստությամբ։ Մինչդեռ Վ. Կապիրինը և Վ. Սեմյոնովն արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշն անբավարար են համարում ոչ թե այս, այլ այն նկատառումով, թե իբր սոսկ այդ չափանիշով հնարավոր չէ դատել կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի առաջադիմականության մասին։ Այս նկատառումը հետևանք է արտադրողական ուժերի զարգացման մակարդակի ոչ ճիշտ ըմբռնման ու դրանից բխող այն սխալ պատկերացման, թե արդի սոցիալիզմն արտադրողական ուժերի զարգացման մակարդակի տեսակետից չի գերազանցում ժամանակակից կապիտալիզմին։

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը հասարակական առաջադիմության իրոք գլխավոր, այլ կերպ ասած՝ դոմինանտ չափանիշն է։ Լինել դոմինանտ արդեն նշանակում է միակը չլինել, բայց և նշանակում է միակը լինել այն իմաստով, որ հենց այս չափանիշն է վերջին հաշվով թույլ տալիս դատելու տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիայի առաջադիմականության աստիճանի մասին։ Նույն այս իմաստով, դա նաև բավարար չափանիշ է, և արտադրական հարաբերությունների տիպի՝ որպես հասարակական առաջադիմության լրացուցիչ չափանիշի, կարիքը տվյալ դեպքում չի զգացվում։ Հակառակ Վ. Սեմյոնովի կարծիքի, արտադրողական ուժերի զարգացման մակարդակի, արտադրության եղանակի այս կողմի «կտրումը» արտադրական հարաբերությունների տիպից, կամայականություն չէ, քանի որ այն արտադրության եղանակի գերորոշիչ կողմն է (արտադրական հարաբերությունների տիպը վերջին հաշվով որոշվում է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով)։

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակի չափանիշը, մեր համոզմամբ, մեթոդոլոգիական տեսակետից անխոցելի է։ Պատահական չէ, որ

---

13 «Современный капитализм и буржуазная социология», М., 1965, էջ 115։

14 Նույն տեղում, էջ 117—118։

15 «Марксистская и буржуазная социология сегодня», էջ 65—66։

դրա դեմ և ոչ մեկի կողմից սովորաբար չի բերվում մեթոդոլոգիական կարգի առարկություն, իսկ եթե բերվում է, ապա միայն անհետևողականության գնով։ Այնուամենայնիվ, հեղինակների մի ղգալի մասն այս չափանիշը չի ընդունում։ Բացի այն, որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակը լռելյայն կամ բացահայտ կերպով հանգեցվում է արտադրողական ուժերի բովանդակության զարգացման փուլին, այստեղ ոչ պակաս կարևոր դեր է խաղում և այն հանգամանքը, որ ոմանք անհրաժեշտ խորությամբ չեն ուսումնասիրել հարցի դրվածքը Կ. Մարքսի «Կապիտալ» և Վ. Ի. Լենինի «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատություններում։ Մինչդեռ սրանք այն աշխատություններն են հատկապես, որոնցում մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները հասարակական առաջադիմության չափանիշ են համարում հենց արտադրողական ուժերի զարգացման մակարդակը և այդ չափանիշը կիրառում են կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի, նրա զարգացման, առաջադիմության աստիճանների նկատմամբ։

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը արտադրողական ուժերի բովանդակության և ձևի (արտադրության կազմակերպում) հակադրամիասնության զարգացման մակարդակն է, հակադրամիասնություն, որի դոմինանտ կողմը, անկասկած, արտադրողական ուժերի բովանդակությունն է։ Վերջինիս որոշիչ տարրը աշխատանքի գործիքներն են, ուստի և արտադրողական ուժերի բովանդակությունը ամենևին չհանգեցնելով դրանց, բոլորովին չանտեսելով արտադրության անձնական գործոնը, պայմանականորեն աշխատանքի գործիքներ ասելով կհասկանանք արտադրողական ուժերի ողջ բովանդակությունը։ Վերջին հաշվով որոշվելով զարգացման տվյալ փուլում գտնվող աշխատանքի գործիքներով, արտադրության կազմակերպման ձևը նույնպես խաղում է որոշիչ դեր, օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ և, մասնավորապես, կապիտալիստական և կոմունիստական հասարակական-տնտեսական ֆորմացիաների լինելիության վաղ աստիճաններում ձեռք է բերում նույնիսկ վճռական նշանակություն, առաջ է ընկնում աշխատանքի գործիքների զարգացման՝ այդ ֆորմացիաներին ադեկվատ փուլից։ Սա նշանակում է, որ հասարակական-տնտեսական ֆորմացիայի առաջադիմության մասին նրա ցանկացած աստիճանում չի կարելի դատել միայն աշխատանքի գործիքների զարգացման փուլով (արտադրողական ուժերի բովանդակությամբ)։ Սակայն այստեղից չի հետևում, թե արտադրողական ուժերի զարգացման մակարդակը չէ՞ որ հասարակության տնտեսական առաջադիմության չափանիշն է. չէ՞ որ այդ մակարդակը երևան է գալիս ոչ միայն աշխատանքի գործիքների զարգացման փուլում, այլև արտադրության կազմակերպման ձևի մեջ։

«Տնտեսական դարաշրջաններն իրարից տարբերվում են ոչ թե նրանով, թե ինչ է արտադրվում,— գրում է Կ. Մարքսը,— այլ նրանով, թե ինչպես, աշխատանքի ինչ միջոցներով է արտադրվում»[16]։ Այս միտքը խոսում է հենց այն մասին, որ, իրոք, տնտեսական դարաշրջանների տարբերիչ հատկանիշը, այսինքն՝ հասարակական առաջադիմության հիմնական չափանիշը չի նույնանում արտադրողական ուժերի բովանդակության հետ (որը պատասխա-

16 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 191։

նում է «ինչ միջոցներով է արտադրվում» հարցին), որ այդ չափանիշը երևան է գալիս նաև արտադրողական ուժերի ձևում (որը պատասխանում է «ինչպես է արտադրվում» հարցին)։

Իսկապես կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի ստորին աստիճանի՝ մանուֆակտուրային կապիտալիզմի, առաջադիմականությունը ֆեոդալիզմի նկատմամբ Կ. Մարքսը բխեցնում է ոչ թե նրանից, թե ապրանքն «ինչ միջոցներով է արտադրվում», այլ նրանից, թե «ինչպես է արտադրվում»։ Այլ կերպ ասած, ֆեոդալիզմի նկատմամբ մանուֆակտուրային կապիտալիզմի առաջադիմականությունը Կ. Մարքսը բխեցնում է հենց մանուֆակտուրայից՝ որպես արտադրության կազմակերպման ձևից։ Արտադրության կազմակերպման այս ձևը հասարակության տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճան է նշանավորում, որովհետև դա անհրաժեշտորեն ենթադրում է աշխատանքի հասարակական նոր արտադրողական ուժեր։ Դրանք են՝ միևնույն սեփականատիրոջ հրամանատարության տակ մեծ թվով բանվորների կենտրոնացումը կամ կոոպերացիան[17], որն «իր իսկ էությամբ մասսայական ուժ է»[18], և աշխատանքի բաժանումը մանուֆակտուրայի ներսում կամ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը, որը «պատմական առաջադիմություն է և անհրաժեշտ մոմենտ հասարակության տնտեսական զարգացման մեջ»[19]։ Ընդ որում, հասարակական աշխատանքի այս նոր արտադրողական ուժերը, որ ներկայացնում են մանուֆակտուրայի երկու կողմերը, փոխադարձաբար որոշում են միմյանց։ «Միևնույն կապիտալի հրամանատարության տակ մեծ թվով բանվորների կենտրոնացումը,—կարդում ենք «Կապիտալ»-ում,— կազմում է ինչպես ընդհանրապես կոոպերացիայի, այնպես էլ մանուֆակտուրայի բնական ելակետը։ Իր հերթին, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը տեխնիկական անհրաժեշտություն է դարձնում գործադրվող բանվորների թվական աճումը։ Այժմ աշխատանքի առկա բաժանումն է թելադրում բանվորների այն մինիմումը, որ առանձին կապիտալիստը պետք է աշխատեցնի, մյուս կողմից, աշխատանքի հետագա բաժանման առավելությունները կապված են բանվորների թվի նոր ավելացման հետ...»[20]։

Մանուֆակտուրան, այսինքն՝ աշխատանքի բաժանման վրա հանգչող կոոպերացիան[21], այսպիսով, արտադրության կազմակերպման որակական նոր ձև է։ Մինչդեռ, արտադրողական ուժերի զարգացման այն մակարդակում, որի վրա խարսխվում է մանուֆակտուրային կապիտալիզմը, արտադրողական ուժերի բովանդակության, աշխատանքի գործիքների զարգացումը միայն քանակական է։ Այստեղից հասկանալի է, թե ինչու է Կ. Մարքսը հասարակական առաջադիմության չափանիշ համարելով արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, տվյալ դեպքում առաջին պլան է մղում մանուֆակտուրան, արտադրության կազմակերպման ձևը։ Պետք է նկատել նաև, որ

---

17 «Աշխատանքի այն ձևը, երբ աշխատանքի միևնույն պրոցեսին կամ աշխատանքի տարբեր, բայց իրար հետ կապված պրոցեսներին պլանաչափ կերպով և համատեղ շատ մարդիկ են մասնակցում, կոչվում է կոոպերացիա» (նույն տեղում, էջ 343)։

18 Նույն տեղում, էջ 343։

19 Նույն տեղում, էջ 385։

20 Նույն տեղում, էջ 379։

21 Նույն տեղում, էջ 384։

հենց մանուֆակտուրայով է որոշվում աշխատանքի գործիքների քանակական զարգացումը, որ հենց մանուֆակտուրան է ստեղծում աշխատանքի գործիքների զարգացման որակական նոր փուլին, ձեռքի գործիքից մեքենային անցնելու նյութական նախադրյալները։ «Աշխատանքի գործիքների դիֆերենցիացիան, որի շնորհիվ միևնույն տեսակի գործիքներն իրենց յուրաքանչյուր առանձին կիրառման համար առանձին կայուն ձևեր են ընդունում, և նրանց մասնականացումը, որի շնորհիվ ամեն մի այդպիսի առանձնացած գործիք միայն հատուկ մասնագործ բանվորի ձեռքում է լիակատար չափով դրսևորում իր գործունեությունը, սրանք են մանուֆակտուրայի բնորոշ առանձնահատկությունները,— գրում է Կ. Մարքսը.—...մանուֆակտուրային շրջանը պարզեցնում, բարելավում ու բազմապատկում է աշխատանքի գործիքները՝ դրանք հարմարեցնելով մասնագործ բանվորների բացառիկ առանձնացած ֆունկցիաներին։ Դրանով էլ հենց նա ստեղծում է մեքենայի նյութական նախադրյալներից մեկը, մեքենայի, որը բազմաթիվ պարզ գործիքների կոմբինացիա է»[22]։ Այնուամենայնիվ, մանուֆակտուրային կապիտալիզմի տեխնիկական բազիսը մնում է մասնագործ բանվորի ձեռքի գործիքը։

Կապիտալիզմի տնտեսական առաջադիմության երկրորդ աստիճանի հիմքում ընկած արտադրողական ուժերի զարգացման նոր մակարդակն ամենից առաջ երևան է գալիս ոչ թե արտադրության կազմակերպման ձևում, այլ արտադրողական ուժերի բովանդակության, աշխատանքի գործիքների զարգացման որակական նոր փուլում՝ մեքենայական արտադրության մեջ։ Այս իսկ պատճառով, երբ խոսվում է մանուֆակտուրային կապիտալիզմի նկատմամբ կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի զարգացման երկրորդ՝ մեքենայական արտադրության, աստիճանի առաջադիմականության մասին, ապա խոսքն առաջին հերթին վերաբերում է մեքենային, որն արդեն արտադրվում է մեքենայի միջոցով։ Հենց այստեղ է, որ կապիտալիզմը կանգնում է իր սեփական ոտքերի, իրեն ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա։

Իհարկե, արտադրության կազմակերպման ձևն էլ անփոփոխ չի մնում։ Նախ, ավելորդ դարձնելով մկանային ուժը, մեքենան ոչնչացնում է բանվորների կենտրոնացման, կոոպերացիայի մանուֆակտուրային սահմանները։ «Աշխատանքն ու բանվորներին փոխարինելու այս հզոր միջոցը,— գրում է Կ. Մարքսը,— իսկույն դարձավ վարձու բանվորների թիվն ավելացնելու միջոց, բանվորական ընտանիքի բոլոր անդամներին, առանց սեռի ու տարիքի խտրության, կապիտալի անմիջական իշխանությանը ենթարկելով»[23]։ Մյուս կողմից, այն է՛լ ավելի խորացնելով աշխատանքի բաժանումը, ոչնչացնում է նաև բանվորի վիրտուոզությունը։ Ինչպես Կ. Մարքսն է նշում, «աշխատագործիքի հետ միասին այն բանեցնելու վիրտուոզությունը ևս բանվորից անցնում է մեքենային»[24]։

Ճիշտ է, բանվորը չի դադարում «մասնագործ բանվոր» լինելուց, բայց և այնպես մեքենան հնարավոր է դարձնում «աշխատանքի փոփոխությունը, ֆունկցիաների շարժումը, բանվորի բազմակողմանի շարժունությունը»[25]։

---

22 Նույն տեղում, էջ 359—360։

23 Նույն տեղում, էջ 414։

24 Նույն տեղում, էջ 440։

25 Նույն տեղում, էջ 511։

Կապիտալիզմն այս աստիճանում էլ կանգնած չի մնում։ Արտադրողական ուժերի հետագա զարգացումը, աշխատանքի գործիքների ու արտադրության կազմակերպման ձևի հետագա կատարելագործումն ուղեկցվում է անհատական կապիտալների ինքնուրույնության ոչնչացմամբ, մի կապիտալիստի ձեռքով մյուսի սեփականազրկմամբ, բազմաթիվ փոքր կապիտալների՝ փոքրաթիվ խոշոր կապիտալների վերածմամբ։ Այս պրոցեսը Կ. Մարքսն անվանում է կապիտալների բուն կենտրոնացում։ «Այստեղ,— գրում է նա,—կապիտալը հավաքվում է ոմանց ձեռքում հսկայական մասսաներով, որովհետև մի այլ տեղ նա չքանում է բազմաթիվ ուրիշ ձեռքերից։ Այդ բուն կենտրոնացումն է, ի տարբերություն կուտակման և համակենտրոնացման»[26]։ Կապիտալների կենտրոնացումն իր հետ բերում է արտադրողական ուժերի կենտրոնացում, կոոպերացիա։

Կապիտալների կենտրոնացման ճանապարհով, երբ, ինչպես Վ. Ի. Լենինն է նշում «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» հայտնի աշխատությունում՝ «կոնկուրենցիան վեր է ածվում մոնոպոլիայի»[27], կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիան թևակոխում է իր զարգացման բարձրագույն՝ իմպերիալիզմի աստիճանը։ Վերջինիս տնտեսական ամենախոր հիմքը մոնոպոլիան է։ Ահա թե ինչու է կապիտալիզմի զարգացման այս աստիճանը Վ. Ի. Լենինը սահմանում մոնոպոլիայի հատկանիշով։ «Եթե անհրաժեշտ լիներ իմպերիալիզմի որքան կարելի է կարճառոտ բնորոշումը տալ, ապա պետք էր ասել, որ իմպերիալիզմը կապիտալիզմի մոնոպոլիստական ստադիան է։ Այսպիսի բնորոշումը կպարունակեր ամենագլխավորը...»[28]։ Իսկ մոնոպոլիան ենթադրում է նաև արտադրողական ուժերի կենտրոնացման կամ կոոպերացիայի խիստ բարձր մակարդակ և աշխատանքի ավելի զարգացած բաժանում, քան մինչ այդ գոյություն ուներ։

Մոնոպոլիան կապիտալիզմի զարգացման վերջին խոսքն է և դա ամենից առաջ այն պատճառով, որ այստեղ արտադրության և կապիտալների կենտրոնացումը հասել է սահմանային մակարդակին, որից այն կողմ կապիտալիզմի գոյությունն անհնարին է։ Մոնոպոլիստական կապիտալիզմը «կոնկուրենցիայի լիակատար ազատությունից դեպի լիակատար հանրայնացման հասնելու անցման հասարակարգ է»[29]։ Իսկ լիակատար հանրայնացման, արտադրողական ուժերի լիակատար կենտրոնացման հասարակարգը կոմունիզմն է։ Մի այլ կապակցությամբ Վ. Ի. Լենինն ուղղակի գրում է, որ մոնոպոլիաներից «...չի կարելի առաջ գնալ, առանց դեպի սոցիալիզմ գնալու...»[30]։ Ինչ խոսք, մոնոպոլիան ստեղծում է արտադրողական ուժերի բովանդակության զարգացման նոր հնարավորություններ։ Այն հնարավոր է դարձնում նաև արտադրության մասնակի ավտոմատացումը, միայն մասնակի՝ ոչ ավելին։ Բայց ինչպես մեքենայի մանուֆակտուրային արտադրությունը, այնպես էլ ավտոմատի մոնոպոլիստական կիրառումը չի նշանակում հեղաշրջում արտադրողական ուժերի բովանդակության մեջ, անցում աշխատանքի գործիքների զարգացման որակական նոր փուլին, կոմպլեքսային-ավտոմատացված,

26 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 656։
27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 266։
28 Նույն տեղում, էջ 353։
29 Նույն տեղում, էջ 267։
30 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 459։

սիստեմներին: Այդ անցման անհրաժեշտությունը պահանջում է արտադրության կազմակերպման նոր, մոնոպոլիայից որակապես տարբեր ձև, որն այլևս անհամատեղելի է կապիտալիզմի հետ։ «Կապիտալի մոնոպոլիան կապանք է դառնում արտադրության այն եղանակի համար, որն աճել է նրա հետ և նրա հովանու տակ։ Արտադրության միջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հանրայնացումը հասնում է այն կետին, երբ նրանք անհամատեղելի են դառնում իրենց կապիտալիստական պատյանի հետ։ Վերջինը պայթում է։ Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը։ Սեփականազրկողներին սեփականազրկում են»[31]։

Ինչպես պարզվում է, կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի զարգացման ասպիճանները պարբերացնելիս Կ. Մարքսը և Վ. Ի. Լենինը ելնում են արտադրողական ուժերի զարդացման մակարդակից, յուրաքանչյուր դեպքում առաջին պլան են մղում արտադրողական ուժերի այն կողմը, որը տվյալ դեպքում խաղում է գերորոշիչ դեր։ Այս են վկայում, նույնիսկ, կապիտալիզմի «մանուֆակտուրային փուլ», «մեքենայական արտադրության փուլ», «մոնոպոլիստական փուլ» արտահայտությունները։

Այսպիսով, հասարակական առաջադիմության չափանիշն ընկած է արտադրողական ուժերի՝ որպես բովանդակության և ձևի հակադրամիասնության մեջ։

УРОВЕНЬ РАЗВИТИЯ ПРОИЗВОДИТЕЛЬНЫХ СИЛ КАК КРИТЕРИЙ ОБЩЕСТВЕННОГО ПРОГРЕССА

ЭДИК АБГАРЯН

Резюме

По вопросу о критерии общественного прогресса в литературе существуют различные точки зрения. Мы считаем в методологическом отношении правильной точку зрения тех авторов, которые в качестве критерия общественного прогресса принимают уровень развития производительных сил.

Однако и противники, и даже сторонники этого критерия часто производительные силы сводят к содержанию самих производительных сил, т. е. к средствам производства и рабочей силе, тогда как производительные силы являются единством, с одной стороны, средств производства и рабочей силы, а с другой—кооперации и разделения труда.

Отсюда делается вывод, что уровень развития производительных сил обусловливается не только содержанием производительных сил, но и их формой, т. е. разделением труда и кооперации.

31 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 796։